

**ԱՎԵՏԻՔ ԻՍՍՀԱԿՑԱՆԻ ՎՈՑԱՏԵՏՐԻՐԻ
ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՐՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՑ**

Վ. Ս. ԴԱՐՏԻՆՅԱՆ

Ավետիք Իսահակյանն իր լեզվի և ոճի կատարելագործման համար աշխատել է երկու ուղղությամբ՝ համապատասխան լեզվական նյութերի որոնում ու հավաքում և ձեռագիր ու տպագիր ստեղծագործությունների մշակում ու հղկում: Այս կենսական գործընթացների թելադրանքով էլ Իսահակյանը ամբողջովին կլանվում է ժողովրդական լեզվի և ոճի ուսումնասիրությամբ, միայն թե դա չպետք է հասկանալ նեղ գիտական, ակադեմիական իմաստով: Նրա այդ աշխատանքը կրում էր զուտ գործնական բնույթ:

Դրա արգասիքն է նաև գրողի ձեռագիր ժառանգության այն մասը, որը պայմանականորեն կարելի է անվանել **բանաստեղծի ծոցատետրերի լեզվական հարստություն**: Առանց չափազանցության, դա մի յուրատեսակ հանրագիտարան է, բառերի, բառակապակցությունների և լեզվաոճական այլ միջոցների մի ամբողջ շտեմարան: Մնում է միայն ավտոմատոր միջնա ասիմ այդ ոսկե ֆոնդը անուշադրության է մատնված:

Իհարկե, բանաստեղծի լեզվի և ոճի հարցերը բավականին հանգամանորեն քննել են սուսանձին լեզվաբաններ¹, բայց միայն տպագիր խոսքի, նրա գրական ժառանգության վերջնական արդյունքի հիման վրա: Նրա առանձին ստեղծագործությունների լեզվաոճական միջոցների հղկման ու բյուրեղացման գործընթացին մվիրված մեր մի քանի հոդվածներ² որոնցում փորձել ենք հետևել դրանց մշակման ու հղկման ընթացքին՝ սաղմնային վիճակից մինչև վերջնական արդյունքը, շատ հետաքրքրական նյութեր են բացում, որի ընթացքում ակնատես են լինում, թե ինչպես է հույս նյութը եփվում ու թրծվում, ինչպես են բառերն ու բառաձևերը իրենց տեղերը զիջում ու փոփոխվում, հասկանում են այս կամ այն բառի, դարձվածի, արտահայտության փոխարեն մեկ ուրիշը գործածելու անհրաժեշտությունը, մի խոսքով՝ հետևում են հեղինակի մտքի ընթացքին և արվեստի կատարելագործմանը:

Մեր սույն աշխատանքում փորձել ենք անդրադառնալ բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայի մի առանձին հատվածի՝ մի քանի ծոցատետրերի մեջ ամփոփված լեզվաոճական նյութին՝ տալով նրա ընդհանուր բնութագիրը:

Ըստ թեմատիկ բովանդակության՝ այդ նյութերը դասակարգել ենք հետևյալ խմբերի. 1. Ժողովրդախոսակցական բառաշերտ, 2. գրաբարյան բառեր ու բառաձևեր, 3. տեղմիներ և այլ բառեր, 4. կոնկրետ որոշակի ստեղծագործությունների մեջ գործածելու համար ընտրված բառեր, 5. բառակապակցություններ, 6. հեղինակային կազմություններ, 7. դարձվածներ, դարձվածային արտահայտություններ, 8. անեծքներ և օրհնանքներ, 9. հեղինակային ոճական արտահայտություններ, 10. ժողովրդական ոճեր, արտահայտություններ, 11. պատմական, աշխարհագրական, դիցաբանական անուններ, տեղանուններ, 12. իր ժամանակի գյուղատնտեսական գործիքների, դաշտային աշխատանքների տարբեր գործընթացներին վերաբերող բառեր ու անուններ:

Ստորև ներկայացնում ենք դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը.

1. **Ժողովրդախոսակցական բառաշերտ**. Ինչպես արդեն ասվել է, Իսահակյանը ծա-

¹ Խ. Կանաչյան, Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն, Եր., 1940 թ., Վ. Առաքելյան, Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Եր., 1954 թ.:

² Վ. Դարժինյան, Օհան ամու կերպարի նախատիպի շուրջը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1985, թիվ 5, Բանաստեղծության ազգագրական հատկանիշները նույն ամսագրում, 1984, թիվ 3, Բանաստեղծության բյուրեղացման գործընթացը, նույն ամսագրում, 1989, թիվ 4:

մանակին լավ էր ըմբռնել այն ճշմարտությունը, որ գրական լեզուն միշտ պետք է գաբ-գանա ու կատարելագործվի, հիկվի ու մաքրվի: Բայց գրական լեզուն գեղարվեստական գրականության լեզվի հիմքն է միայն:

Որպեսզի ստեղծեր իր գրականության լեզուն, նա քանաստեղծական խոսքով քանդեց այն պատճենը, որ կար անցյալ դարի 80-ական թթ. հաշ քանաստեղծության լեզվի և ժողովրդական կենդանի խոսքի միջև: Արդյունքը եղավ այն, որ նա թումանյանի հետ գեղարվեստական գրականություն բերեց լեզվական թարմ գույներ ու երանգներ, նրան ներարկեց ժողովրդական ոգի: Ժողովրդական բառերի՝ լեզվաոճական կենսաթրթոխ այդ միջոցների հանքաշխարհը գործնականորեն անսպառ է, և քանաստեղծը այդ հարստությունից օգտվեց շոպյորեն:

Նրա ծոցատետրերի անհատական բառարանում հաշվվում է գրի առած մոտ 900 բառ, իսկ եթե նկատի ունենանք եղած ամբողջ ժառանգությունը, երևի դրանց քանակը հասնի հազարների: Ստորև բերված ժողովրդական բառերի մի մասի դիմաց, փակագծերում՝ նշված են դրանց գրական համարժեքները կամ էլ բացատրված են իմաստները: Ահա այդպիսի բառերի մի փունջ. ժեռ (կարծր, ամուր), երթալ, քոլորել, գոցել, ճամփա, Լս, շաղ տալ, շափաղ տալ, թառյան, սուփրա (սփոռց), թեզ (շուտ), շվաք (քակ), դադրած (հոգնած), արարմունք, ազապ (աշխարհք չտեսած), աստնվորս (այս աշխարհը), անուր (վզի օղակ), քարափ, էստեղ, երնեկ, ամպ ու զամպ, յար, նազելի, թոն (անձրև), շուք, գրու-մրող, թև տալ (քաջալերել), մոգոնել, ափուխուփ անել, ջահել, կակուծ, նշխուն, էրան, մղեղ, տաշտնկեր (կարծեմ՝ մի օր ծնված, մի ավագանու, միևնույն օրը մկրտված երեխաներ), ծնակ, առը (ակոս, հողի շերտ), շուտ տալ, շողք, մուց, պակրա, քոշ, կորկ (անմշակ հող), երե, սրսփալ, լաս (հնձած խոտի շարք), հեսան (սրող քար), անուշ, ծաղկոց, դարաստան (դարավանդ), հորոտ-մորոտ (հավերժաճարս), ծփան, վետվետան, տե-սիլք, շակուլ (այն գործիքը, որով որմնադիրները չափում են պատի ուղիղ լինելը քայմ-րությունից), լոխկ, գառ ու զարբաք և այլն:

2. **Գրաբարյան բառեր ու բառաձևեր.** Եթե 80-ական թթ. գրաբարյան բառերը ծառայում էին որպես գեղարվեստական լեզվի բառապաշարի հարստացման միջոց, ապա 90-ական թթ. սկսած դրանք օգտագործվում են որպես խոսքի ոճավորման աստղծ: Երևի սա է պատճառը, որ նշված գրառումների մեջ այդպիսի բառերն ու բառաձևերը սակավ են: Օրինակ՝ գիհ, փապ, գուշա, ազնավուր, աշտե, ստապար, վեստ (իշխան, ազատ), սեպուրի: Գրաբարի հայցական հոլովի -զ նախդրի հավելումով բառեր՝ արկանել—զարկել, արմանք—զարմանք, արտուղի—զարտուղի, եղծանել—զեղծանել, գուշ—զգուշ (ստուգել):

3. **Տերմիններ և սղ բառեր.** Հիմնականում օտար տերմիններ և տերմինային արտահայտություններ են՝ տարբեր գիտաճյուղերին ու բնագավառներին վերաբերող, որոնք վկայում են քանաստեղծի հետաքրքրությունների լայն շրջանակի մասին: Օտար տերմինների մի մասի դիմաց ներկայացված են հայերեն համարժեքները, մյուսները բացատրված են:

- Գուպե**— սերբիական շուրթակ (քնար) երեք և մեկ լարով
- Գալտոնիկ**— գույներն իրարից վատ զանազանող
- Ռեզիոնակ**— ճյուղային, մարզային
- Ինֆանտալիզմ**— մանկական հատկություններ
- Եսլոս**— գրույցներ մեկնող

- Սիմբոլ**— Կնճանակե կոսմիկական պատկեր, երևույթ
- Ֆանտոմ**— ուրվական, տեսիլք, մոդել
- Ինստուիցիա**— հայտնատեսություն
- Ատավիզմ**— պապենակականություն
- Էկզպասացիա**— գրգռված վիճակ, հիվանդագին ոգևորություն
- Ռադիոս**— ընկած տեղը 2000 տարի կյանք չի լինի:

Այս բաժնում հավաքված են նաև մոտ 200 հաղերեն բառ և տերմինային արտահայտություն, որոնցից 60-ը վերցված է Վենետիկի առձեռն բառարանից: Բերում ենք մի քանի օրինակ:

- Ազ**— կարծեմ պարսկերեն լավ, գեղեցիկ կնճանակե:
- Հայրաք**— անամոք
- Գույիկ**— կին, գեղեցիկ կին
- Հրոս**— անձը, հրոսակ՝ խումբը
- Բարեկենդամ**— պարսկերեն կնճանակե՝ քաց

- Ակուր**— կրակ պահելու տեղ, օջախ
- Դարաստան**— դարավանդ
- Անեղաշունչ**— շատ փառահեղ
- Ակրատ**— նախանաշիկ
- Անուր**— վզի օղակ
- Վեմ**— ծաղո

* Փակագծերում եղած բացատրությունները, բառերն ու լեզվաոճական մյուս բոլոր նշումները քանաստեղծին են:

թողնել, ազատ թողնել, արեղաթող, մոն-
թաթող (մոնթ՝ աշակերտ) = ուտել-խմել, Անդաստակ— բակ, հայաթ
ուրախանալ:

4. Որոշակի ստեղծագործությունների մեջ գործածելու համար ընտրված բառեր. հա-
ների այս խմբերի նպատակային կենտրոնացումը ցույց է տալիս, որ հեղինակը նախօրոք
խնամքով նախապատրաստել է այս կամ այն ստեղծագործության բառային անհրաժեշտ
շինանյութը: Ըստ որում, բերված են արաբերեն բառերի ու տերմինների հայերեն համար-
ժեքները, բարբառային բառերի դիմաց գրված են գրական համարժեքները, իսկ հայերեն
գրական բառերը բացատրված չեն, քանի որ դրա անհրաժեշտությունը չի զգացվել:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի համար՝

Քասիդ— երկտողանի, երկայնածիգ
գրված պոեմ արաբերեն
Իբլիս— դև, սատանա
Նարնիս— նարգիս (ծաղիկ)
Սամոււ— անապատի տաք քամի,
հողմ, խորշակ
Սուրահ— պոեմի գլուխ, հատված

Հեջազ— արաբական ծովագերք, նահանգ
Ջաթար— ծեթրոն (բույս անապատի)
Շչուքը— փառք, գոհություն
Փազել— սիրո երգ
Շարգի— երգ
Սպամ— ողջույն
Շենս— արև
Ալ-Կորան— Ղուրան

«Լիլիթի» համար՝

Լիլիթ— անթերի, գեղեցիկ թիթեռ
դեզերել թիթեռներ
զեփյուռ դրախտի խնձոր
սյուք

համբույր
մրմունջ
մրմնջալ
թիթեռի քայլ
քայլերով պարտովել
դրախտի պտուղ
գթոտ
հոգու հոգի

«Մանկալ ես, բեզարած ես»-ի համար՝

Բեզարած— հոգնած
Մուփրա— սփոռց

Քաուլան— նազելի, սիրելի Շվաք— բակ
Քեզ— շուտ Դադրած— հոգնած

Ղուլ— թռչուն

Ցալի— Սի գլուղական եղանակ է, որ տըր-
վում է ուրախ, իդիլիական և պարեր-
գական ոտանավոր երգերին:

5. Բառակապակցություններ. Այս կարգի բոլոր միավորները որոշիչ-որոշյալի կապակ-
ցություններ են, որոնք աչքի են ընկնում առարկաների, երևույթների և նրանց հատկանիշ-
ների արտասովոր, երբեմն անսպասելի իմաստային կապով, որը բորբոքում է ընթերցողի
երևակայությունը, ակտիվացնում է նրա զգայարանները: Դրանց ստորադաս անդամը գե-
ղարվեստական մակդիր է, որը արտահայտված է բարդ կամ ածանցավոր ածականով: Այ-
նուիսեռևս դրանք, որոշ բացառությամբ, հողակապավոր բարդություն են, որոնց մեջ զու-
գորդված են երկու այնպիսի հատկանիշ, որոնք տարբեր կողմերից միաձուլյալ հատկանշում
են առարկան: Օրինակ՝ հողաբույր ծերունի, ոսկեթույր մագեր, լուսերանգ փետուրներ, ներ-
սույզ հայացք, աշխարհատանջ մարդ, աշխարհատես մարդ, քաջալանջ ձի, բազմաձեռն
հարված, քաջարշավ ընթացք, ահեղաթափ կարկուտ, բոնաշունջ հողմ, կեղծանուշ ձևեր,
ներքնասույզ խոհեր, մահաշունջ ատելություն, զարմանասքանչ հաղթություն, սիրասնունդ
որդի, բազմագոշ գորք, ոսկեծաղ փետուր, այգածին առավուտ, շքեղապանծ գործ, քազմ-
ամբոխ աղաղակ, հողմածածան դրոշ:

6. Հեղինակային կազմություններ. Պետք է նախապես նշել, որ վերոհիշյալ բառակա-
պակցությունների ստորադաս բառերը նույնպես հեղինակային կազմություններ են: Դրանք
բոլորն էլ հայերենի բառակազմական օրենքներով ստեղծված բառեր են, որոնք իմաս-
տալի են, արտահայտիչ, գեղեցիկ, լսողությունը շոյող և դյուրին արտասանվող: Սակայն,
ցավով պետք է նշել, որ այս խմբի և վերոհիշյալ հեղինակային կազմություններից մոտ 40
միավոր դուրս են մնացել բառարաններից, իհարկե, ոչ բառարանագիրների մեղքով, քանի
որ դրանք շրջանառության մեջ չեն դրվել, ուստի և ուշադրությունից վրիպել են: Ահա
դրանցից մի քանիսը՝ բարձրասայր, ուրախատես, աշխարհախորհ, ըղձասեր, վատարյուն,
մեծաթունդ, քաջարթուն, թևաթիչ, պաշտար, փողագոչ, հավերժաբորք, ահեղաթունդ,
քաջահնչյուն, մտակետ, այգաբույր, ծանտակակիծ, երկրաթունդ, կարծրապինդ, բոնագոր,
եսակետ, խորհուրդընկալ, սրբակերտ, արկածամահ, սիրասովոր, ազատալեզու, ազգագլուխ,
գույակենցաղ և այլն:

7. Դարձվածներ, դարձվածային արտահայտություններ. Գրառումների մեջ մեծ թիվ են

կազմում դարձվածները և դարձվածային արտահայտությունները: Դրանց թվում են նաև առածներն ու ասացվածքները: Ժողովրդական լեզվի այս հարստությունը խտացված ձևով արտահայտում է ժողովրդի կենսափորձը, իմաստնությունը, վերաբերմունքը իրականությանը, ժամանակի հոռի բարբերը, բազմաթիվ այլ բացասական հատկանիշներ, մարդկային տարբեր բնույթի հարաբերություններ:

Գայլի հետ ուտում է, տիրոջ հետ ողբում: Սատանից տասն օր առաջ է ծնվել: Տիրավորին տերն է տարել, անտերին՝ գելը: Ուտում է սարի խոտը, չես գալիս լծան մտը: Փողն ու գող— իրար ծնող: Մարդը հող է, ուշք ու միտքը՝ փող: Մի տեղ սով է, մյուս տեղ՝ ծով: Մի լվի համար վերնակն է այրում: Էշը բշտիկն է (իրավունքը ուժեղիկն է): Ալիի գլուխն էինք լալիս, Վալիին բերին: Թրի երկու երեսն էլ կտրում է: Մեր տանուտերը որ Մյուն ըլլա, մեր կերածն էլ ճյո պիտի ըլլա (ճյո— կաղնու տերև ոչխարների համար): Թռել էս առուն, ելել էս գարուն: Մի դրան շուն են: Ձեռք ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես: Աշխարհը գլուխը անցուց: Գիծը գծին տեսավ, ճակատը մի թիգ լեցնավ: Ոտիս տակ կրակ է վառվում (= պիտի գնամ, շտապում եմ): Նրան լավ թափ տվեց (= իմացավ գաղտնիքը): Գարի հացի պես իրար չեն գա (չեն մերվի, չեն միանա, չեն միաբանվի): Սև աչքը մորուց կլինի: Թառ ու մառ եղանք (քայքայվել): Էնպես լավ տափեցնողն է (խմող): Գնա գտիր Էնպես խնամի, որ պոչը պոչիդ նմանի: Էս աղջիկը սողոց հետ պահմտոցի կխաղա: Էս աղջիկը խաղցնող է: Էս տունը քթին չի դեն (գոռոզ է): Ծատ ամպել է (մոսայ, տխուր): Դուկաս աղի անքի ճիճուն կտրեցին: Ով էշ, ես՝ փալան: Քթին չորեց (քիչ էր): Նստողն ինչ գիտե, գնացողն ուր հասավ: Բու հացը քեզ թշնամի է: Ինչ աղբյուր գնացի, ցամքավ: Կուսանմ սող պաչեմ, բարձրանամ՝ ձեռք պաչեմ (խնդիր, աղաչանք) և այլն:

8. Անեծքներ, օրհնանքներ. Հայտնի է, որ անեծքներն ու օրհնանքները ժողովրդական լեզվամտածողության ցայտուն դրսևորումներից են: Դրանք ստեղծվել են մարդկային փոխհարաբերությունների հիմքի վրա, սակայն դրանց արմատները հասնում են վաղնջական ժամանակները, երբ մարդը, հավատարմով գերբնական ուժերին, սարսափում էր նրանցից կամ էլ ապավինում էր նրանց ողորմածությանը: Սակայն ժողովրդի պատկերացումները նաև իրական հող ունեին՝ կապված բնության առարկաների ու երևույթների օգտակարության կամ վնասակարության հետ: Նա իր կենսափորձով դրանք բաժանում էր երկու խմբի՝ քարի և չար: Անեծքների և օրհնանքների մեջ ժողովուրդը հենց այս տեսակետով էլ խտացրել է իր բացասական կամ դրական վերաբերմունքը մի կողմից՝ չարի, վատի, անարդարի, մյուս կողմից՝ լավի, դրականի, մարդկային արժանիքի նկատմամբ: Ժողովուրդը հավատացել է խոսքի ուժին, ուստի և հորինել է համապատասխան անեծքներ ու օրհնանքները: Դրանց մեջ դրսևորվում են ժողովրդի սուր դիտարկողականությունը, առարկաների ու երևույթների հակադրությունների ու գուգորդումների վարպետությունը, ասելիքի անվերստությունը, իր նմանի վրա խոսքով ներգործելու մարդու հարձակողական կիրքը: Ահա մի քանի այդպիսի գրառումներ:

Աստված քո մոր աչքով քեզ նայի: Աչքդ լույս, բախտավոր զավակ ըլլա (ծննդկանին): Ծեճքով մարդ ըլլա, աստված մորազո տա, ծաղկիս ու խնդաս (մանուկներին): Ծամաք աչքով ըլլա, բարով վայելեք: Կանաչ ծլես, կարմիր պտղես (= պտուղ տաս): Ինչ անես, աստծո իրեն պատիժը գտնի: Կրակ ընկնի Մաթթաի ուրբ ու օշախ: Ձենդ կտրիր, երկուսիդ էլ մի պատանք դնեն: Դոճերեն հաց հավաքես: Տունդ ավեր դառնա: Ո՛չ անաչխ, ո՛չ քաղն, ո՛չ ծաղկիս, ո՛չ պտկիս (պտուղ տաս): Բու հերք թաղե: Հիտերի գլուխը թաղեմ:

Մենք անեծքներն ու օրհնանքները մտցրել ենք բանաստեղծի հավաքածուի լեզվա- ոճական համակարգի մեջ, քանի որ դրանք, բուն դարձվածներից տարբերվելով ու առանձնանալով, շփման եզրեր ունեն և ավելի լայն առումով յուրահաստիկ դարձվածներ են:

9. Հեղինակի կողմից ստեղծված ոճական արտահայտություններ, որոնք հաղորդակցական տիպի դարձվածների արժեք ունեն, Սրանք իսկապես խառնակամական ոճի կերպ են կրում իրենց վրա, որոնք գեղեցիկ են, պատկերավոր, սեղմ ու դիպուկ: Այդ խտացումները արտահայտում են այս կամ այն պահի վիճակն ու տրամադրությունները, մարդկային նուրբ ապրումներ, ամենաբնորոջ հատկանիշներ՝ զարմանակիրեն դրսևորելով գուգորդումներ կատարելու հեղինակի մեծ կարողությունը, նուրբ ճաշակը: Դրանցում որևէ բառի անակնկալ գործածությունը ուժեղացնում է պատկերի բովանդակությունը, ներքին թափը, ստեղծում ապրումի սրություն, ընկալման լիարժեք հագեցածություն:

Վերցնենք հետևյալ օրինակը՝ Արտերը կատաղած էին լեցուն հասկերով: «Կատաղած լեցուն հասկեր» կապակցության միջոցով ընթերցողը պատկերացնում է բնության հրաշք պարզևի՝ ցորենի լիքը, տոուզ, հուռթի հասկերի այլքավորվող ծովը, որից լիության ու քերկրանքի զգացում է ապրում մարդ:

Ահա և այլ նմուշներ. Հոգին աչքերի միջով նայում է աշխարհին: Ականջները բացել և հոգով լսում էր: Արևն ուտում էր մարդու (= անտանելի շոգ): Կասկածը կերպ մեզ:

վանքը թառամել էր այքերի մեջ: Փաստերը կնոջ պես համատ են: Բնությունն ստեղծում է մարդը գեղծում: Երգը ձայների բյուրեղյա աղբյուր է: Ինստիկտը զարթնեց մեջը (= սեռական կիրք, զայրույթ, բարկացում, նախամարդու վայրագություն): Ձայնը, ծիծաղը լույս սփռեց: Մասիսը նյութացած գաղափար է: Կնոջ մարմինը Դավթի տապիղի պես թրթռում էր: Ծունը նստել էր առյուծակերպ:

10. **Ժողովրդական ոճեր, արտահայտություններ.** Սրանք առօրյա գործածական արտահայտություններ են, որ յուրաքանչյուր պահի և ամեն մի առիթով լսում ենք ժողովրդի խոսքում, կենդանի ոճեր, որոնք հատուկ են միայն «շարքային» մարդուն:

Լինելով ժողովրդի հոգու հարազատ դրսևորումներ՝ այս կարգի արտահայտությունները խոսքային հարաբերություններում ստեղծում են ջերմություն, հոգեհարազատություն: Դրանց մի մասը ցույց է տալիս խոսողի հոգեվիճակը, մյուս մասն ունի հումորի, բարեհոգության երանգ խոսակցի նկատմամբ, խրատական, դաստիարակչական բովանդակություն և այլն: Մակայն դրանց ամենազիլավոր հատկանիշը հագեցածությունն ու դիպուկությունն է:

Փյուն կընկնի: Նա չամչնաւու մեջ քաջ է: Մեկ գեշ աղջիկ չտեսանք, մեկ էլ՝ լավ հարս: Ըս ինչ սիրուն կնիկ է՝ վառեց-թողեց: Ի՞նչ է ծիծի գաղիս առաջս կանգնած: Ի՞նչ է վովը-րում: Էդ մի հոգավորը ի՞նչ է անում: Ոտքս կտտեր, չգայի: Ականջները սրեց, խոսքը ստարավ տեղ հասցրեց: Թագա հարս՝ անուշ, համով: Ըս կոտորվածներին ով է կերակրողը (չատ զավակ ունեցողի խոսք է): Պատավի արածը գտած է, կերածը՝ կորած: Միսս վրաս հավվեց: Ի՞նչ կլինի քարի մարդուն կլինի, չարին ի՞նչ կլինի: Ամեն մարդ իր ճակատագիրն ունի: Գտիր աչքս կոխիր: Առանց խմելու հարբել էինք: Ի՞նչ ես ցցի պես առաջս տնկվել: Մեր հայը էսօր քաղաք գնաց (ամուսինը, այլը): Էդ ըսե, ուրիշ բան մի ըսե: Կուրանամ, խավարիմ: Պատառը բկուկ վար չի գնամ (տխրություն): Օխա՛յ, սրտովս է: Հորդ հոգուն ստակիս: Տո՛, ավարա էջ: Մարի ջուրին էլ որ լավություն անե, իմ ախպերն է: Նոդ դիր երեսիս, ներս մտիր: Գլխավորս ողջ լինի (= ամուսինը): Այս հարսը անուշ քայլվածք ունի: Կոտանանք, մեռնինք, Բենո ջան, մի քիչ իջիր: Սուտ չխոսող մարդիկ ճշմարտության կետը կըսեն և այլն:

Պետք է նշել, որ վերոհիշյալ արտահայտությունների մեծ մասն ունի տեղական գու-նեբանակ, այն է՝ հատուկ է Թիբակի, հատկապես Գյումրիյա խոսվածքին:

11. **Պատմական, աշխարհագրական, դիցաբանական անուններ, տեղանուններ.** Բա-նաստեղծի ծոցատետրերի լեզվական նյութի այս մասի առկայությունը մեկ անգամ ևս վկա-յում է, թե որքան մեծ է եղել նրա հետաքրքրությունների շրջանակը: Նա անընդհատ ձրգ-տել է հարստացնել իր գիտելիքները, ընդլայնել իմացության սահմանները ոչ միայն ազ-գային, այլև համաշխարհային քաղաքակրթության, այլ ժողովուրդների հոգևոր կյանքի մասին: Ժամանակակիցները վկայում են, որ մեծ բանաստեղծը մի քաչլող հեղինակուհուտարան էր: Նա իր աչք գիտելիքների հսկա պաշարը ձեռք էր բերել անընդհատ սովորելու, ուսում-նասիրելու, գրի առնելու և ամբարելու ճանապարհով: Նա մեծ հետևողականությամբ ու մանրակրկիտությամբ հավաքել, պարզել ու յուրացրել է այն բոլոր նյութերն ու լեզվական միջոցները, որոնք անհրաժեշտ են եղել այս կամ այն ստեղծագործության համար:

Այսպես, օրինակ, բանաստեղծը չէր կարողանա ստեղծել մի այնպիսի հույակապ երկ, որպիսին «Մասմա Մհեր» պոեմն է, եթե նա իտրությամբ չիմանար Մհեր, Առյուծանև Մհեր դիցաբանական անձանունների, Մհերի դուռ, Ագուավու քար անունների ծագման պատ-մությունն ու ստուգաբանությունը:

Սակայն Իսահակյանը նյութեր է հավաքել ոչ միայն հայ, այլև ուրիշ շատ ժողովուրդ-ների՝ հունական, հնդկական, հրեական, օսեթական, սերբիական, վրացական, ռուսական, ֆիննական, մոնղոլական, քաջմիրական դիցաբանական հերոսներին, աստվածություններին, տեղանուններին և այլնի մասին:

Հարկ չհամարելով մեր ուսումնասիրած գրառումների բոլոր քստասուն անունների հի-շատակումը՝ բերենք միան մի քանի օրինակներ՝ վերը ասվածը հաստատող:

Ինդրա— հունական միֆոլոգիայի մեջ ջրային ծնունդ ունեցող աստված:

Ամրամ— Օսերի դիցաբանության մեջ ասված է, թե սրան հանձնում են ծովին, ծովը անում է, հզորացնում, վերածնված վերադարձնում իր եղբայրներին:

Մհերի դուռ— Պարսկաստանում Միհրիմ Ալիբված Աշանավոր զոհարանները կոչվում էին «Der-i-Mihr», բառացի՝ «Մհերի դուռ»: Դա մաթեմատիկական ճշտությամբ համապա-տասխանում է մեր «Մհերի դուռին»:

Օվկիանոս— հունական միֆոլոգիայի մեջ ջրային ծնունդ ունեցող աստված:

Առյուծանև Մհեր— Համապատասխանում է պարսկերեն Ծիրիսուրշիդ անվանը, հոմա-նիշներ են: Առյուծանև՝ Հի Աշանակում առյուծ պատողը, այլ՝ առյուծի կերպարանքով:

Թուր-Կայծակին— Հայ դիցաբանության մեջ Թուր-Կայծակին ամպրոպային ծագում ունի: Հից հասկացությամբ կայծակը և թուրը հոմանիշներ են՝ միևնույն նյութից կոած՝

երկաթից: Կայծակ-թրի մեջ ապրում է այն առասպելը, որ իբրև թե երկաթը վայր է ընկել երկնքից, ասուպի միջոցով՝ գտված դրությամբ:

Նավասարդ— Նավասարդի օրը երգում էին Վահագնի ծնունդը, Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունը:

Պրոմեթեոս— Օվկիանիո Կլիմենենի որդին, ջրային աստված: Վեդայական շրջանի պրամանոս կրակախառն գործիքի անունից: Դա փայտածղերով շինված խաչաձև այն գործիքն է, որի միջոցով շինելով կրակ էին ստանում: Ուրեմն՝ Պրոմեթեոս կնշանակի կրակ հանող:

Ագռավուքար— Ագռավը կրակապաշտների սրբազան թռչունն էր: Հին հասկացողությամբ կրակի հափշտակությունը ոչ միայն վերագրվում էր դյուցազուհեներին, այլև թռչունների՝ ագռավներին, արծվին:

Հնդկական մի առասպելում արծիվը հափշտակել է կրակը ժայռից: Հունական դիցաբանության մեջ հաճախ Պրոմեթեոսը արծվի տիտղոսն է: Ագռավը, իբրև կրակի հափշտակիչ, սուրբ էր համարվում: Հայտնի են գերմանների Վոթան (Վոդան) աստծու երկու ագռավները: Հունական արև-աստծու՝ Ապոլոնի մոտ էլ՝ միշտ սնաթույր ագռավը: Արև աստվածները բանտարկված են կրակի սրբազան թռչունների մոտ:

Օսերի էպոսի Ամրանը, որ գոտեմարտի է կանչում Խոցաու աստծուն, կոչում նրա հրեշտակի հետ և պատիժը կրում է լեռան մեջ բանտարկվելով, և վերջապես գերմանական Լյուցիֆերը, որ Տիրոլի լեռներում փակված է և եթե դուրս գա, աշխարհը պիտի ավերի: Նրանք մարտնչեցին աստծու դեմ, աստծու ստեղծած տարերային շար ուժերի դեմ, աստծու կողմից օրհնված հասարակական սարք ու կարգի դեմ, և աստված իր հրեշտակների և սրբերի բանակով հաղթեց նրանց և դատասպարեց հավերժական տանջանքների ու բանտարկության: Սակայն ժողովուրդները չհաշտվեցին չարափոխված, բայց իրենց արտի խորքում միշտ սիրելի հին աստվածների ու տիտանների ճակատագրին: Ժողովուրդները սպասում են իրենց բարերարների ազատագրմանը:

Հայ ժողովրդի հոգին նույնպես չհաշտվեց իր սիրելի հերոսի ողբերգական ճակատագրի հետ:

Մհերի դուռը, որի հետև փակված է դյուցազուն, սիմվոլիկ իմաստով նայում է «Սուրբ արևին»: Քարայրի մեջ, Մհերի գլխի վերև, օր ու գիշեր վատվում է մի անշեջ ճրագ՝ խորհրդանշանը արեգակնային Միհրի: Այդ ճրագից, ըստ մեր էպոսի, կրակ է վերցնում ժողովուրդը, երբ հանգչում է իրենց տան ճրագը:

Եվ «Մհերի դուռը» դարերի ընթացքում, մինչև մեր օրերը, եղավ սրբավայր, ուր ժողովուրդը ուխտ էր գում, խունի ծխում, հավատալով մեծերի փրկչական առաքելությանը:

12. Իր ժամանակի գյուղատնտեսական գործիքների, դաշտային աշխատանքների, ալևապ առարկաների անուններ. Իսահակյանը իր ամբողջ էությամբ, հոգու ողջ թելերով կապված էր հայ գյուղաշխարհի հետ, թեև իր ամբողջ գիտակցական կյանքը անցկացրել է Գյումրիում, Երևանում և եվրոպական խոշոր քաղաքներում: Գյուղն ու գյուղացին մի առանձին հիացումի ու գուրգուրանքի առարկա են եղել բանաստեղծի համար: Այդ մեծ սերը խորապես արտահայտված է նրա ստեղծագործություններում: Դրանով է պատճառաբանվում հետաքրքրությունն այն ամենի նկատմամբ, ինչ կապված է եղել գյուղի և գյուղացու, հայրենի քնաշխարհի հետ: Նա հավաքել ու գրի է առել գյուղական աշխատանքների հետ կապված գործիքների, տարբեր առարկաների, կենցաղային իրերի, հայրենի սարերում ու դաշտերում անող բույսերի ու ծաղիկների անուններ: Զարմանալին այն է, որ նա շատ հաճախ չի բավարարվել դրանց սուկ անունների նշումով, այլ խորացել է մանրամասնությունների մեջ, տվել այս կամ այն առարկայի, աշխատանքի գործընթացի սպասիչ նկարագրությունը:

Իհարկե, այս դեպքում չի կարելի մտածել, թե դա արված է միմիայն իր ստեղծագործության համար լեզվական աստղծ հավաքելու մտադրությամբ: Մեր կարծիքով՝ բանաստեղծը այդ կերպ աշխատել է հագուրդ տալ իր մեծ սիրուն ու գուրգուրանքին: Ընթերցողը, ծանոթանալով այդ գյուղերին, տոգորվում է նույն զգացումով, դաստիարակվելով իր հայրենի եզերքի նկատմամբ մեծ հայրենասերի՝ որդիական սիրո օրհնակով:

Ահա այդպիսի բառերի մի գեղեցիկ փունջ՝ սիճձ, Էրիծնակ, հացի տեսակները՝ լոշ, լավաշ, բոքոն, կուտ, լծակեց եզ, խնոցի, ձձուս, գութան, արոր, արորի մասերը՝ վիզ (կնամխաքն է), առատամ՝ հողի մեջ մտնող մասը՝ ծայրերին խոփ, մանրուտ (մաճի գլուխ, որը բռնում է մանկալը), արորի առաջին լուծ եզը՝ կոչվում է ամուլ. հորիք, սրան քշողը՝ հոտաղ, գութան, սրա մասերը՝ առատամ, թուր, մաճ, ձևիչ, խոփ, շղթան՝ գութանի ճամպարակ. լծում են 12 լուծ եզ ու գումեշ. գութանն ուրեմն ունի 6 տուն (ամեն մի գույգ լուծը կկոչվի տուն, առաջին տունը կսկսվի խարազանից՝ գութանից ելած երկայն փայտը տնիժի հետ): Հերկելուց հետո հարթում են մանկեղով, տափան (ցանելուց հետո հարթում են սրանով). խոզան (հասկի մնացորդը գետնի մեջ), լաս (գերանդու հնձած օրանի շերտերը),

խորով (հավաքած լսանքը, որից խորձ կկապեն), բարդ (երեսուն խորձ իրար վրա դնելով կդառնա բարդ), եղև (առանց խորձի ու կեմի բարդը եղևն է). սալը— սրա մասերը՝ ասեղ՝ երկու փայտերը, որ կմիանան իրար, միացնող փայտը կկոչվի սկիի ականջ: Ասեղի վրա իջած փայտերը միասին՝ թամբ: Հետո՝ բարձ, ակոս, որի մեջ սոցին է: Կոփ՝ առաջին ու վերջին ասեղ դրած տախտակները: Կոփերի ծայրերի սուր ցցերը՝ սթքա, որոնց վրա՝ թառերը: Կամ, կամքար, եղան՝ խորձը բարձրացնող գործիք: Թեղ, թեղը երևել. քարմաղ՝ ցորենը մանր քարերից զատող և ճլլեկ զատող, որ շտաբ սերմեր են՝ սև գույնի: Ծլլեկը կուտ կդառնա հավերի համար:

В. С. ДАРБИНЯН—Языковое богатство записных книжек Аветика Исаакяна.— Поэтика Аветика Исаакяна стала неотъемлемой частью художественной культуры нашего народа. Ее неисчерпаемое богатство обнаруживается и в неопубликованных донныне записных книжках поэта, содержащих интересный стилистический, лексический и фразеологический материал.

Общей характеристике, обработке и классификации этого материала и посвящена данная статья.